

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**



Մարզկենտրոնը՝

ք. Վանաձոր

Տարածաշրջանները՝

Սպիտակ,
Ստեփանավան,
Տաշիր,
Թումանյան,
Գուգարք

Քաղաքները՝

Վանաձոր,
Ալավերդի,
Ստեփանավան,
Սպիտակ
Տաշիր,
Ախթալա,
Թումանյան,
Շամլուղ

Տարածքը	3 799 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	12.8 %
Համայնքներ, 2016թ. տարեկգրի դրությամբ	107
Քաղաքներ	8
Գյուղեր	122
Բնակչության թվաքանակը 2016թ. տարեկգրի դրությամբ	255.0 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	132.8 հազ. մարդ
գյուղական	92.2 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	7.5 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	52.1 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	251 073.8 հա
այդ թվում՝ վարելահողեր	42 095.4 հա

ՀՀ Լոռու մարզում ծովի մակերևույթից բարձրագույն կետը Թեժ լեռան գագաթն է (3 101 մ), ամենացածրը՝ Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանը (մոտ 390 մ):

Մարզի տնտեսության առաջատար ճյուղերը գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն են:

Գյուղատնտեսության ոլորտում առանձնանում են հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները:

Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, մասնավորապես՝ մետաղագործական արդյունաբերություն և սննդամթերքի արտադրություն ճյուղերը:

Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում է ՀՀ գլխավոր երկաթուղին:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

2015թ. մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 8.9 %,
- գյուղատնտեսություն 7.5 %,
- շինարարություն՝ 5.6 %,
- մանրածախ առևտուր՝ 3.6 %,
- ծառայություններ՝ 1.5 %:

Մարզկենտրոն **Վանաձոր քաղաքը** (2016թ. տարեսկզբին՝ 82.2 հազ. բնակիչ) գտնվում է Փամբակ և Բագում լեռնաշղթաների միջլեռնային գոգավորությունում, Տանձուտ և Փամբակ գետերի միախառնման վայրում, ծովի մակերևույթից 1 350 մ բարձրության վրա: Հեռավորությունը Երևանից ավտոխճուղով 115 կմ է, երկաթուղով՝ 224 կմ: Քաղաքի միջով հոսում են Տանձուտ և Վանաձոր գետերը:

Երբեմնի արդյունաբերական հզորություններով հարուստ ու միաժամանակ առողջարանային կենտրոն համարվող քաղաքն այսօր փորձում է վերագտնել իր նախկին տեսքը և վերականգնել իր նախկին համբավը:

Քաղաքում գործում են բազմաթիվ մանր ու միջին արտադրական այլ ձեռնարկություններ, առավել քաղաքակիրթ ձև են ստանում առևտուրն ու ծառայությունների մատուցումը, տարբեր ֆինանսավորման աղբյուրների հաշվին կատարվում են բնակարանային և արդյունաբերական շինարարության աշխատանքներ:

Սպիտակ քաղաքը (2016թ. տարեսկզբին՝ 13.0 հազ. բնակիչ) գտնվում է Փամբակ գետի ափին, Երևանից 95 կմ, իսկ մարզկենտրոնից 20 կմ հեռավորության վրա: Զբաղեցնում է 1 400 հա տարածք: Քաղաքով են անցնում Երևան–Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհն ու երկաթուղին:

Սպիտակ քաղաքը մինչև 1988թ. արդյունաբերական կենտրոններից էր: Քաղաքում գործել են հանրապետության միակ շաքարի գործարանն ու վերելակաշինական գործարանը: Ներկայումս քաղաքում գործում է շաքարի նոր գործարանը, փոքր ու միջին արտադրական որոշ ձեռնարկություններ, բնակչության հիմնական մասը զբաղված է գյուղատնտեսության ոլորտում:

Ստեփանավան քաղաքը (2016թ. տարեսկզբին՝ 12.8 հազ. բնակիչ) զբաղեցնում է 1 666 հա տարածք, գտնվում է ծովի մակերևույթից 1 375 մ. բարձրության վրա: Քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհը: Քաղաքը գտնվում է Երևանից 139 կմ, Վանաձորից՝ 24 կմ հեռավորության վրա:

Քաղաքում գործել են արտադրական մանր ու միջին մի քանի ձեռնարկություններ, որոնք զբաղվել են սննդի, կահույքի և էլեկտրասարքերի արտադրությամբ:

Տաշիր քաղաքը (2016թ. տարեսկզբին՝ 7.5 հազ. բնակիչ) հիմնադրվել է 1834թ.՝ որպես ռուսական արքայազնի և կոչվել է Վորոնցովկա, հիմնականում ապրել են ռուսներ: 1991թ. վերանվանվել է Տաշիր: Քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ավտոճանապարհը: Տաշիր քաղաքը գտնվում է Երևանից 156, Վանաձոր քաղաքից՝ 42 կմ հեռավորության վրա:

Քաղաքում գործում են կաթի վերամշակմամբ զբաղվող մի քանի կազմակերպություններ, որոնց արտադրած կաթնամթերքը (պանիր, կարագ) լայն սպառում ունի ոչ միայն հանրապետությունում, այլև հանրապետությունից դուրս:

Ալավերդի քաղաքը (2016թ. տարեսկզբին՝ 13.0 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդ գետի ափին (Երևանից 162 կմ, Վանաձորից՝ 47 կմ հեռավորության վրա): Քաղաքը ձևավորվել է պղնձաձուլական գործարանի կառուցումից հետո: Վերագործարկված պղնձաձուլական արտադրությունը գործում է նաև այսօր, որի արտադրանքը կազմել է ՀՀ Լոռու մարզի տնտեսական ցուցանիշների ծանրակշիռ մասը:

Ախթալա քաղաքը (2016թ. տարեսկզբին՝ 2.0 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդի ձախ ափին (Երևանից 186 կմ հեռավորության վրա), լեռնային դարավանդի վրա: Քաղաքի արդյունաբերությունը մասնագիտացած է հանքագործական արդյունաբերությունում (արտադրվում է պղնձի խտանյութ):

Թումանյան քաղաքը (2016թ. տարեսկզբին՝ 1.6 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդի աջ ափին (Երևանից 148 կմ, Վանաձորից՝ 42 կմ հեռավորության վրա): Հետպատերազմյան շրջանում տեղական հումքի բազայի վրա կառուցվել է հրակայուն աղյուսի գործարան, որի շուրջն էլ ձևավորվել է ներկայիս Թումանյան քաղաքը:

Շամլուղ քաղաքը (2016թ. տարեսկզբին՝ 0.7 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդ գետի ձախ ափին (Երևանից 196 կմ, Վանաձորից՝ 63 կմ հեռավորության վրա): Հայտնի է պղնձի, արծաթի հանքավայրերով և համարվել է հանքաշահագործման կարևորագույն կենտրոններից մեկը Հարավային Կովկասում:

ՔԱՂԱՔՆԵՐ

Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ¹
Վանաձոր	82 221
Այավերդի	13 583
Ստեփանավան	12 783
Սպիտակ	12 954
Տաշիր	7 531
Ախթալա	2 050
Թումանյան	1 603
Շամլուղ	655

ԳՅՈՒՂԵՐ

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ²
Գուգարքի տարածաշրջան		
1	Ազնվաձոր	457
2	Անտառամուտ	354
3	Անտառաշեն	276
4	Արջուտ	1 233
5	Արջուտ կայարանին կից	67
6	Բագում	1 388
7	Գուգարք	5 598
8	Գյուլյուղարա	-
9	Դարպաս	2 073
10	Դերբետ	831
11	Եղեգնուտ	850
12	Լեռնապատ	2 032
13	Լերմոնտովո	982
14	Հալավար	125
15	Հայդարլի	27
16	Ձորագետ	256
17	Ձորագյուղ	245
18	Սարգահովիտ	3 864
19	Շահումյան	2 935
20	Վահագնաձոր	352
21	Վահագնի	1 180
22	Փամբակ	313
23	Փամբակ կայարանին կից	55
24	Քիլիսա	-
25	Քարաբերդ	84
26	Ֆիոլետովո	1 283
Թումանյանի տարածաշրջան		
1	Աթան	202
2	Առողջարանին կից	14
3	Ամոջ	193

¹ Մարզ քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ:

² ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղերի կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 953 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2016թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +12.9%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ²
4	Բենդիկ	65
5	Ակներ	573
6	Ախթալա	2
7	Ահնիձոր	182
8	Այգեհատ	210
9	Արդվի	195
10	Արևածագ	745
11	Աքորի	2 700
12	Դսեղ	2 306
13	Թեղուտ	771
14	Լորուտ	1 013
15	Ծաթեր	352
16	Ծաղկաշատ	221
17	Կաճաճկուտ	358
18	Քոբեր կայարանի	40
19	Կարմիր Աղեկ	140
20	Հագվի	519
21	Հաղպատ	828
22	Ճոճկան	2 142
23	Մարց	495
24	Մեծ Այրում	913
25	Մդարթ	447
26	Նեղոց	311
27	Շամուտ	228
28	Շնող	3 127
29	Չկալով	215
30	Ջիլիգա	107
31	Փոքր Այրում	270
32	Քարինջ	634
33	Քարկոփ	405
34	Օձուն	5 128
Սպիտակի տարածաշրջան		
1	Արևաշող	2 570
2	Գեղասար	945
3	Գոգարան	1 340
4	Լեռնանցք	1 468
5	Լեռնավան	1 649
6	Լուսաղբյուր	1 073
7	Խնկոյան	368
8	Ծաղկաբեր	1 426
9	Կաթնաջուր	1 955
10	Հարթագյուղ	1 402
11	Ղուրսալ	555
12	Մեծ Պարնի	2 125
13	Նոր Խաչակապ	634
14	Շենավան	510
15	Շիրակամուտ	2 455
16	Ջրաշեն	3 633
17	Սարայանջ	187
18	Սարահարթ	1 357
19	Սարամեջ	1 778
20	Քարածոր	468
Ստեփանավանի տարածաշրջան		
1	Ագարակ	1 274
2	Արմանիս	357
3	Ամրակից	550
4	Բովաձոր	308
5	Գարգառ	1 347

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ²
6	Գյուլագարակ	2 642
7	Լեջան	950
8	Լոռի բերդ	414
9	Կաթնաղբյուր	879
10	Կողես	395
11	Կուրթան	2 026
12	Հոբարձի	836
13	Հովնանաձոր	63
14	Յադրան	69
15	Պուշկինո	298
16	Սվերդլով	1 084
17	Վարդաբլուր	1 313
18	Ուռուտ	1 090
19	Ուրասար	411
Տաշիրի տարածաշրջան		
1	Ապավեն	132
2	Արծնի	298
3	Բյագողարնոյե	218
4	Գետավան	70
5	Գոգավան	49
6	Դաշտաղեմ	105
7	Լեննահովիտ	1 140
8	Կաթնառատ	1 050
9	Ջյունաշող	143
11	Չորամուտ	313
12	Մերովկա	347
13	Կրուգլայա շիշկա	134
14	Մեծավան	5 798
15	Մեղվահովիտ	155
16	Նորամուտ	31
17	Միխայելովկա	834
18	Նովոսելցովո	205
19	Նորաշեն	1 265
20	Պաղաղբյուր	133
21	Պետրովկա	189
22	Պրիվոլնոյե	1 048
23	Սարատովկա	346
24	Սարչապետ	2 190

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2015թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10 000	5 334	4 666
Ծնվածներ, մարդ	136	65	71
Մահացածներ, մարդ	125	62	63
Ամուսնություններ	56	X	X
Ամուսնալուծություններ	21	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	198	95	103
հանրակրթական	1 308	629	679
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	103	71	32
նախնական մասնագիտական (արհեստագործական)	24	5	19
միջին մասնագիտական	84	47	37
բարձրագույն մասնագիտական	168	104	64
Առողջապահության ոլորտ՝			
Հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	39 315
Մարզիկներ, մարդ	174	26	148
Զբաղվածներ, մարդ	4 269	2 148	2 121
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	156	133	23
բժիշկներ	22
միջին բուժանձնակազմ	51
Գործազուրկներ, մարդ	798	425	373
Մոցիայական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	2 004	1 257	747
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	897	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	21 486
թատրոն	1 261
համերգ	1 606
թանգարան	1 280
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	51	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	30	X	X
միջին ծանրության	14	X	X
ծանր	7	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են: